ԶԵՌԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑՈՒ «ՎԱՍՆ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ» ՔԱՐՈԶԸ. ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ ՆՈՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԻՑ

*Սոյն յօդուածում մեր կողմից շրջանառութեան է դրւում, քննւում, ինչպէս նաեւ մեկնաբանւում է XIII դարի խոշոր աստուածաբան Վարդան Արեւելցու «**Վասն կռապաշտութեան եւ կախարդութեան**» քարոզում տեղ գտած տեղեկութիւնները «հեթանոսութեան», «սատանայապաշտութեան», «պատկերապաշտութեան» եւ գուշակութիւնների տարբեր տեսակների մասին, ինչպէս նաեւ սոյն յօդուածում առաջին անգամ հրատարակւում է այս քարոզի բնագիրը։*

Բնագիրը գտնւում է Մաշտոցեան Մատենադարանի 8030 թուահամարի ձեռագրում[1]։ Ձեռագիրը ժողովածոյ է, արտագրուել է 1341 թ. Ազախ քաղաքում։ Գրիչը եւ միաժամանակ ստացողը Տէրտէր քահանայ Երեւանցին է։ Ունի 434 թերթ, թղթից է (22,5+14,5), գիրը միասիւն բոլորգիր՝ կազմուած 24 տողից[2]։ Այս բնագիրը նկատել ու իր գիտական պրպտումներում բնագրի որոշ տեղեկութիւններ առաջին անգամ քննել է ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանը[3]։

*Վարդան Արեւելցու սոյն բնագիրը կարեւոր աստուածաբանական սկզբնաղբիւր է, որը մեզ պատկերացում է տալիս հեթանոսութեան, պատկերապաշտութեան եւ սատանայապաշտութեան ու կախարդութեան նոյնականացման ընկալմանը, որը բնորոշ է եղել XIII դարին[4] (Վարդան Արեւելցու «**Վասն կռապաշտութեան եւ կախարդութեան**» քարոզի բնագիրը տե՛ս ստորեւ)։*

206ա Վասն կռապաշտութեան եւ կախարդութեան, որ մեղք է մեծ

Կռապաշտութիւն սկիզբն և մայր եղև անթիւ չարեաց և բազում անաւրէնութեանց առ ազգս մարդկան և յոյժ հեռացոյց զնոսայ յԱստծոյ։ Եւ արդ բեր զմիտս քո ո՛վ քրիստոսասէր եղբ[5](206բ)արք և պատմեսցուք յաղագս սորայ, որպէս և փոքր մի ծանուցաք վերագոյն, վասն այլոց մեղաց, որ գործին յաշխարհի։ Ասի քան, թէ սկիզբն կռապաշտութեան ի Բաբէլոն եղև, քանզի յորժամ Հոգին Աստծոյ քակեալք լոյց զաշտարակն և զհիմն ի վէր տապալեաց զնայ, բաժանեաց զլեզու մարդկան և ցրուեաց զչար միաբանութիւն նոցայ։ Եւ յայնժամ շինեաց սկա զաւրն Բէլ զԲաբէլոն թագաւորական աթոռ։ Եւ յետ ժամանակաց թագաւորի ուրումն որդի վախճանեցաւ և նայ յոյժ սուգ էառ ի վերայ որդոյն և ծառայք նորայ եղեն սուտակայ սպասք և մարդահաճոյք և նկարեցին զպատ-

[1] Տե՛ս Մատենադարան, հմր. 8030, էջ 206ա-214բ։

[2] **Օ. Եգանեան**, **Ա. Ջէյթունեան**, **Փ. Անթաբեան**, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցեան Մատենադարանի, խմբ. **Լեւոն Խաչիկեանի**, հ. 2, Երեւան, 1970, էջ 657։

[3] **Լ. Խաչիկեան** (2012), Նախամեսրոպեան գրի հարցը եւ հմայագրերը, Աշխատութիւններ, հ. 2, Երեւան, էջ 18-20։

[4] Մատնանշուած երեւոյթների բնութիւնն առկայ է մեր այս յօդուածում՝ **Айк Акопян**, *Взгляд средневекового армянского богослова на идолопоклонство и магию,* Caucaso-Caspica: Труды Института востоковедения РАУ, выпуск VII, 2022: *С. 111-114.*

[5] Թերթի ամենաներքեւը գրուած է՝ Կռապաշտութեան սկիզբն պատկերապաշտութիւն է։

կեր որդոյն նորայ և մատուցին առաջին նորայ։ Եւ նայ տեսեալ զպատկեր որդոյն, յոյժ խնդաց և մխիթարեցաւ ի նայ։ Եւ եդին զնայ մեծ ուսով ի տան գանձ ի նորայ և խունկ և երկրպագութիւն տային պատկերին։ Եւ թագաւորն մտանէր և տեսանէր զպատկերն և հեռանայր սուգն ի (207ա) սրտէ նորայ։ Անցան նոքայ մահուամբ յաշխարհէս։ Եւ էկին յետ նոցայ այլք և նոյնպէս արարին որդոց և եղբարց իւրեանց ուսեալք և խրատեալք յառաջնոցն և սկսան բազումք առնել զայս։ Ժամանակ անցաւ ի վերայ և գողացաւ չարն սատանայ զմիտս մարդկան և մտանէին դեւք ի պատկերս նոցայ և առ պեղծ աչաւք խաւսէին անդ ի առ տգէտ մարդիկ։ Եւ նոքայ ևս քան զևս յաւելուին ի պատիւ և ի ծառայութիւն պատկերացն և սակաւ սակաւ մոռացան զԱստուած։ Եւ սովորութիւն պատկերագործութեան յոյժ բազմացաւ ի Բաբէլոն և ապայ սկսան դեւքն արհաւիրս և կախարդինս առնել ի պատկերաց անդի առ աչաւք։ Եւ ահ և երկիղղ արկան էր սատանայ ի միտս մարդկան, որպէսզի արիութեամբ իբրև զԱստուած պատուեսցեն զպատկերսն։ Եւ սկսան ուսանիլ մարդիք զկախարդութիւն և ուսան կախարդքն և զինքնեանս ի տաին պաշտել և յետ մահուան նոցա (207բ) կանկնէին զպատկերս նոցայ և պաշտէին։ Եւ այսպէս տարածեցաւ չարն փոքր փոքր ընդ ամենայն ազգս մարդկան և ոչ թողին շարժուն, զոր ոչ պաշտեցին մարդիկ, նաև զախտս և զպատկառանաց մարմինս կանանց և անասնոց։ Եւ յոյժ հեռացան յԱստծոյ որդիք Ադամայ և ջանէր սատանայ, որ զամենայն չարն առնէր մարդկան և համարէր, թե Աստծոյ առն եմ զայս ամենայն։ Զորաւրինակ ծառայ չար, որ չարութեամբ իւրով ապըստամբէ ի թագաւորէն և յորժամ բռնէ զծառայս թագաւորն և չարչարէ և համարի, թէ զթագաւորն չարչարէ և նեղէ։ Եւ արդ քան զի ոչ է լեզու, որ կարէ պատմել զչարն, զոր գործեցին մարդիկ ի ժամանակ կռապաշտութեան՝ առաջնորդութեամբն սատանայի։ Բայց սակաւ մի ասասցուք ի չար գործոցն որպէս կաթ մի ջուր յովկիանոս ծովէն։ Որպէսզի այս ու այլն յայտնի լինի լսողացն։ Յաշխարհն պարսից սահմանեցին աւրինաւք, թէ ամենայն որդի յորժամ լինի այր (208ա) կատարեալ, յառաջագոյն շնասցէ ընդ մայր իւր պեղծութեամբ և հատուսցէ զսերմն մաւրն իւրոյ, ուստի ստեղծաւ և ապայ այլ կին արասցէ։ Տես թէ, քան ի չարագոյն գտան մարդիկ, քան զանասուն, քանզի և յոյժ ախտասէր ձիանք, հրաժարէն ի մարցն իւրեանց։ Եւ որ այլ ինչ պեղծ աղտեղութիւն գործէր առ նոսայ զայն համարձակիմք ասել, զի մի ապականեսցի միտք լսոցացն։ Նաև Աղէկսանդր քաղաքի այր մի էր ի քահանայիցն կուռոցն յոյժ գիտուն չար աւրինացն նոցայ և եղև էսպէս և անուն նորայ Դիոնէսիոս՝ ոչ աթենացին, այլ աղէկսանդրացին և քահանէք չաստուածոց ընկերք նորա գրէին առ նայ՝նախատելով զնայ և ասելով, թէ ընդէ՞ր թողեր հայրենի աստուածս քո։ Իսկ նայ գրեց առ նոսայ և ասաց, թէ և դուք քաչ գիտէք, որ սուտ է կռապաշտութիւնդ և լի է ամենայն աղտեղութեամբ և ոչ կայ շահ ի դոցանէ որդոց մարդկան, այլ ան(208բ)բաւ կորուստ։ Գիտեմ, որ կարի քաչ գիտէք դուք զմէհենատունն և զտաճարն զայն ի հնդիկս, որ է յոյժ հռչակաւոր և է զարդարեալ պայծառութեամբ։ Տեսեալ էք ստոյգ, որ կան պատկեր աստուածոցն դեղաւք նկարեալ յորմս տաճարին, արանցն և կանանցն՝ մերկ և խայտառակ՝ ընդդէմ իրերաց և բաց կայ կանացի իգական անդամն ամաւթանաց և արանցն առնաց ի ծածուկ անդամն ծննդական կան ի բաց կանկնման հանդէպ իգական անդամոցն կանանցն։ Եւ այնպէս ձեւացուցեալ են դեղաւք զպատկերսն, որպէս թէ խառնակեալ կամին չաստուածքն ընդ միմեանս։ Եւ զայս արարին անաւրէն պաշտաւնեայնք և սպասաւորք կռոցն, զի յորժամ գան ժողովուրդքն ի տաճար աստուածոցն ի զոհել և ի տաւնեալ և երկիրպագանեալ և տեսանիցեն զչաստուածսն այնպէս խայտառակեալս և լրբելս։ Յայնժամ ժողովուրդքն համարձակ շարժէին ի չար ախտն ուսեալք ի չաստուածոցն և խ(209ա)առնակեսցեն իբր զչար անասուն։ Եւ

գէճ և չար ախտիւն պատուեսցեն զչաստուածսն զաղտեղիքն, զի այն վայել է նոցայ և այնպիսեաց չաստուածոցն։ Եւ արդ, զի՞նչ պաշտութիւն է այսպիսի ի չար գործս ասացէք ինձ։ Եւ կամ դուք ընդէր հարկ էք զիս դառնալ կրկին ի հայրենի չաստուածսն և պաշտել զնոսայ, ուստի ազատեաց զիս Քրիստոս գալըստեամբքն իւրով։ Եւ արդ այս բաւական է, զոր ասաց Դիոնէսիոս վասն աղտեղութեան կռապաշտութեան և այլ մի շաղախեսցուք զբերանս մեր և զլսելիս ձեր առ իմ պատմել զաղտեղութիւն կռապաշտութեան և այլ մի շաղախեսցուք զբերանս մեր և զլսելիս ձեր առ ի պատմել զաղտեղութիւն կռապաշտութեան, զի անթիւ է։ Եւ զայս ամենայն առնէր սատանայ կախարդութեամբ և սուտ խոստմամբ պատրէր զմարդիկ որպէս և Կիպրիանոս պատմէ, թէ տեսի և ահայ չարատեսիլ էր յոյժ դեւն կռապաշտութեան։ Ունէր ուլունս, առնէր արհաւիրս և խաբէր զմարդիկ որպէս և այժմ գան աշակերտք նորայ ի մէջ քաղաքաց և առնեն առ աչաւք խաղս իմն և արհաւիրս բազում շնչով չար (209բ) վիշապին և զարմացուցանեն զամենայն ոք, որ տեսանեն զայնոսիկ։ Եւ կախարդութեան սիրելին և որդի և գործակից կռապաշտութեան եւ է ի ծածուկ միաւորութիւն սատանայի և նման առաջին կռապաշտիցն՝ է ծառայ նոցայ։ Եւ ասէն յայտնի, թէ քրիստոնայք եմք, զի երկնչին ի թագաւորաց և յիշխանաց, բայց ոչ է պարտ հաւատալ նոցայ, զի ստութիւն ջանա առ աչս մարդկան են ի նոցանէ, որ վասն ագահութեան անկանին յախտս յայս, զի զինչս ժողովեսցեն և կէսքն խոսքին տգիտութեամբ ուսանին զչարն և ոչ իմանան և այլ քվե աղքատութեան առնեն, զի ոչ ունին պետս մարմնոյ։ Եւ սովորեալքն ի նոյն չար մնան, թէպէտ, որ գիտեն, որ գործ է սատանայի, քանզի անհնար է, թէ կախարդն կարէ առնել ինչ առանց սատանայի և շնչոյ նորայ։ Կախարդութիւն և ոչ սակաւ մի ի գիշերի երթան առ նայ դաւանին և միանան ի նայ հոգով և մարմնով և ձեռնագրո(210ա)վն ի հուրն այրին ընդ նմայ և ապայ տայ նոցայ շնակերպ դեւս, որ լինին ի հրամանս նոցայ և առ աչաւք կախարդինս տան առնել նոցայ որպէս կինաւպաս, որ Թ. (9) բիւր դեւք կային ի հրամանս նորայ և Կիպրիանոսի նոր ժամերի կռապաշտութեան և Նիկիտէ և Սիմոնի կախարդի։ Կան միաւոր կախարդքն ընդ սատանաի և գան ի ժողովն քրիստոնէից առ աչս և ասեն, թէ քրիստոնեայք եմք։ Քանզի այսպէս առնէին Մանի և Մարկիոն և Կիրինթոս, Բասիլիդէս և Էպրոկատէս, Գորգիանոս և Մոնտոնոս և Բարդիծան պեղծն։ Կեսք ի սոցանէ եպիսկոպոսք էին և կեսքն կարգաւորք ձևանային։ Եւ կային կապեալք և յամառեալք յախտս կախարդութեան, քանզի Մոնտոնոս եպիսկոպոս էր Տարսոն քաղաքի եւ էր շուն ծէրացեալ յոյժ և լի էր կախարդական արուեստիւ եւ պահեր առ ինքն Բ. (2) պոռնիկ կանայս, ընդ որս միշտ աղտեղանայր շնութեամբ և ասէր, (210բ) թէ ես եմ մխիթարիչ հոգին, որ հանգեայ ի դասս առաքելոցն ի վերնատունն, զորմէ ասէ Գրիգոր Աստուածաբանն, թէ Մոնդոսի չար հոգին։ Նոյնպէս և այլքն, զոր ասացաք վերագոյն ման էին սատանայի, ապայ գտաք ուրեմն ի հին աւրինակն, որ ասէ, թէ յերկիրն Կիլիկեցոց մերձ ի Փռիւգիայ յեզր ծովուն է յոյժ չարագոյն մացառուտ անդառ մի լցեալ չարակերպ վիմաւք և է դժուարագնաց և կայր ի մեջ նորայ գեղ մի մեծագոյն և կային անդ Բ. (2) կանայք՝ վարդապետք ամենայն կախարդաց և գային բազումք առ նոսայ և ուսանէին ի նոցանէ գործս սատանայական և կոչէր անուն նոցայ Պեպուզանք և անուանէին զաշակերտքս նոցայ պեպուզիանոսք եւ սոքայ անթիւ առ աչաւք գործ առնէին ի ձեռն դիւացն և ասի բան թէ սատանայ անդ էր արկեալ զաթոռ իւր և ի սոցանէ յոլովագոյն չար մնաց առ ազգս կանանց, նաև յազգս արանց։ Ուսումն ծրար(211ա)ագործութեան և այլ փաթեթք սատանայականք և խաբանաւք ուսուցանեն մի զմի և զգետս կործանեն ի նոյն չարն այժմ մինչև ի կատարած աշխարհի։ Եւ զայս գիտել արժան է, զի սատանայ զկռապաշտութիւն կախարդութեամբ հաստատեր և աստեղաբաշխութեամբն

և ճակատագրութեամբն և անդ ի մնաց առ ազգս մարդկան այս չար ախտս։ Բայց արդ է կռապաշտութիւն և կախարդութիւն, զինչ արմատ ծառոյ և ոստք և շառաւեղք կռապաշտութեան և չար կախարդութեան դեղատութիւն և գարընկեցութիւն և ձեռնածութիւն և ընդոսնագիտութիւն և աստեղաբաշխութիւն և չար ասել զաւրն և կամ զպահն և սոքաւք ասել ինչ կամ առնել։ Հայելի կենդանակերպս և ասել բախտարկութիւն ինչ և ճակատագրութիւն իմն չարի պատահել կամ բարոյ, քննել ախտարարցոյցս և ծննդայ բանել զիւ ամաց մարդկան և այլ ծրարք և հանգուցակք իմն և լե(211բ)զուակապք, և քաղցրադեղք և անասնակապք իմն, զոր գայլակապս կոչեն։ Նաև կապեն զայր, զի թուլացեալ ի կին մերձենալ ոչ կարէ և այլ անբաւ հեթեթանք, զոր ոչ համրեցաք դնել ի գիրս յայս սուրբ, զորս մեծ բռնութեամբ և բազում վաստակաւք և քրտամբք հանին յեկեղեցոյ Աստծոյ սուրբ հայրապետք և վարդապետ, դասք ընտրեալ առաքելոցն և սուրբ հայրապետացն և յոյժ չարաչար նզովեցին զնայ՝ Ավետարան, որ զնոսայ խորհի կամ առնէ և կամ ուսուցանէ, բայց եկև տես ի մերում ժամանակիս, թէ քանի չար գործի ի մեջ եկեղեցոյս Աստծոյ, քանզի այս է ի սկզբանէ Աստծոյ սովորութեան, զի վասն անառակ մեղաց, որ լինի յաշխարհս ածէ ցասումն և դնէ խրատ ի մարդիկ, որպեսզի յիշեսցեն զնայ և ելանիցեն ի մեղացն։ Աղքատացուցանէ, հիւանդացնէ, նվազութիւն բերէ և սով խստագոյն արձակէ, դիւայհարս առնէ և զայլ զանազան պատուհասք յանկարծակի տայ աշխարհի։ Որպեսզի ակամայ ինքն կորզեսցէ զմեզ ի չարէն։ (212ա) Եւ որ գոհանալով համբերէ վշտացն և նեղութեանցն, քաւեսցէ Աստուած զյանցանս նորայ ևս առաւել, որ դիւահար լինի և համբերէ, աղաւթիւք և պահաւք և սրբութեամբ ընդ երանելի մարտիրոսքն պսակ առնու յԱստծոյ, թէպէտ և մեռանի ի չար դիւեն՝ ի ջուր, ի հուր և յայլ ինչ որոգայթ։ Իսկ այժմիկ տեսանեմք, որ դիւահարք փաղչին յեկեղեցոյ և ի խաչէ, յԱւետարանէ և ի քահանայէ, յաղաւթից և ի պահոց, զոր Աստուած դեղ հրամայեաց այս ախտիս։ Եւ առհասարակ դուռտուել երթան առ կախարդս ոչ միայն տգետք և ըռամիկք, այլ առաջնորդք և քահանայք, յաւժար կամաւք և լինին հեռացեալ Յաստծոյ և ոչ թէ միայն վասն դիւահարութեան գնան և այլ ոչ ինչ պետս երթան որ ոչ է անդ մարդկան աւգուտ։ Վիճակափորձս լինի անմտութեամբ և բախտաբանին ի կախարդացն, նաև գիր և ծրար իմն առնուն ի կախարդացն և աւգնութիւն կարծեն զայն ամենայն տեղիս դիւական շունչն և յաւգնութիւն Աստծոյ (212բ) ոչ ապաւինին որպէս և արար Սաւուղ արքայն հեղի, որ գնաց առ վհուկս հարցանել բախտ, վասն որոյ Աստուած եհար և սատակեաց զնայ։ Եւ յորժամ երթան դիւահարքն առ կախարդսն և նա ասէ, թէ քաչակալ իմն ես և ոչ դիւահար, զի և ոչ դեւ այլ աղեկ մանուկ ոմն պատահել վասն սիրոյ և վասն խռովութենէ, հար զքեզ և շփոթեաց։ Եւ այժմ դու անհոգս լեր, զի ես բժշկեմ զքեզ փութով և լաւ քան զխաչ և զեկեղեցին և զԱստուած։ Եւ ասէ, թէ մի պահեր որդեակ և մի աղաւթեր, այլ կեր և խմէ, որպեսզի Աստուած հեռասցի ի քեն և սատանայ մերձեսցի ի քեզ։ Եւ տգետքն յուժարութեամբ յանձն առնուն զասացեալսն ի կախարդացն և ապայ երթան կախարդքն առ վարդապետքն իւրեանց սատանայ և աղաչեն զնայ։ Եւ ասեն թէ առժամանակ մի հան զչար դեւն քո յայս անուն մարդոյ, որ եկեալ է ի կամս քո, որպեսզի հաւատացնեն մարդիկ և գան առ մեզ և մեք ի գունդքն քո միաւորեմք զնոսայ և նայ լսէ կախարդին և առժամանակ մի հանէ (213ա) զդեւն և են ի դիւացնոր դառնան ի նոյն դիւահարն և են, որ ոչ դառնան։ Ո՛վ թէ քանի է խաբեութիւն չարին սատանայի յարարածս վասն կորըստեան մարդկան, քանզի արդարև վայ է ծնընդոց Ադամայ, թէ զինչ լինելոց են յաւուրն վերջումն։ Եւ այլ տան բէրել դիւահարացն խունկ և ձեթ, հաց և գինի, երկաթ և ջուր և յայտնի տան և սեղան դնէ առ աջի դիւացն և սիրով աղիւ և հացիւ կապէ զդիւայհարն ընդ սատանայի։ Լոյս դնէ և խունկ արկանէ դիւացն, փոխա-

նակ խնկին և ճրագին, զոր մատոյց Աստծոյ և դիւացն հացակից և սեղանակից առնէ զնայ, փոխանակ հացին և սեղանոյն Աստծոյ և ջուրն փոխանակ ջրոյ աւազանին և այսպես զբազումս կորուսանեն ծածկաբար։ Եւ մեծագոյն և չար կորուստ այն է, որ երդնուն չարաչար և ասեն, թէ Ավետարան առնեմք զայս ամենայն և սրբովք նորայ և վասն ահի մարդկան, զանունն Աստծոյ սատանայի դնեն և զանուն սրբոցն Աստծոյ դնեն դիւացն սատայել(213բ)ի և առ աչս մարդկան զԱստուած յիշեն, բայց զսատանայ կոչեն ընդոր միաւորեալեան և զսուրբն Աստծոյ ձայնեն, բայց զչար շնական դեւս ծածուկ յառաջ բերեն։ Կան յայտնի և գործեն համարձակ ի մեջ քրիստոնեից և ահ ի մարդկանէ ոչ ունին, քանզի հոգևոր առաջնորդքս բաղեպկանան հոգս եւ ըստ կանոնաց ոչ խրատեն և ոչ կոչեն առ Աստուած։ Քաղցրութեամբ յորդորելով զնոսայ ի բարին յոյս դնելով առ Աստուած դարձուցանելով ի չարէն և դարձեալ ոչ սաստեն խստութեամբ հալածեալ և չարագոյն խրատ դնել ի նոսայ խարել կամ բնաւ այրեալ, զի այլքն երկից են և զայս ոչ ածեն զմտաւութեան Աստուած դատելոց է զնոսայ, քանզի ըստ մարգարէին դետ կացոյց զնոսայ, այլ զգերն զենուն և դեղաւք հիւանդին պետ ոչ առնեն և ոչ լինի նմանողք առաջնորդացն, որք զարիւնս իւրեանց հեղին ի վերայ հոտին Քրիստոսի։ Նաև գործայկալք թագաւորաց և այլ իշխանք մեծամեծք և գաւառակալք բնաւ փոյթ ոչ (214ա) տանին և ոչինչ խստագոյնս առ նոսայ եւ ոչ ծան զմտաւ զայս կորըստական չարս, զոր գործեն նոքայ։ Ոչ հալածեն և ոչ խրատեն զնոսայ և այն, զի ունին իշխանութիւն ոչ ջանան և զայն ոչ գիտեն, թէ Աստուած ի կարողացն խնդրէ զառնելն որպես և դատելոց է զայն, որ զքանքարն թաքոյց, քանզի ում շատ տուաւ շատ խնդրեաց է ի նմանէ և ոչ նմանողք լինին առաջին իշխանացն, որք հեղին զարիւնս իւրեանց վասն հաւատոյն և վասն սուրբ եկեղեցոյ և վասն տկար և տգետ ժողովրդեանն։ Եւ արդ որքան է հնար ատեսցուք զամենայն մեղս և զանաւրենութիւնս և արագագոյն փախիցուք ի հոտոյ նոցայ և զայլս արիաբար խրատեսցուք, զի մի մնասցեն ի մեղս անյուսութեան, բայց ևս առաւել ատեսցուք զկախարդս և զդիւթս և բնաւ մի մերձեսցուք առ նոսայ և առցուք յանձն զխաբեբայ բանս նոցայ և զդիւայշունչ ծրարս և զհայթեթանս նոցայ, որպեսզի ամենայն բան և գործ (214բ) մեր Ավետարանաւ? եղիցին ի կեանս և ի մահ։ Նաև որքան է կարողութիւն խրատեսցուք և զայլս, զի հեռասցին ի նոցանէ և ի պեղծ աղանդոյ նոցայ և տկարաց նաւ գնեսցուք, զի մի տգիտաբար մոլորեսցուք, որպեսզի աստ ամենիքեան ի կամս Աստծոյ քաղաքայ վարեսցուք բարիոք, սրբութեամբ և հանդերձեալսն անպատում բարեացն արժանաւոր լիցուք, շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Պատ. գիտ. թեկ., աւագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Մաշտոցեան Մատենադարան, ՀՌՀ Արեւելագիտութեան ինստիտուտ